ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1521-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 2206-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 14-րդ կետին համապատասխան՝ բնակարանային շինարարությունը խրախուսելու և կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացմանն աջակցելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող

բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 2206-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետը «բազմաբնակարան շենքային համալիրի» բառերից հետո լրացնել «առաջին փուլի» բառերով.

2) որոշման 1-ին կետում «համաձայն հավելվածի» բառերը փոխարինել «համաձայն N 1 հավելվածի» բառերով՝ համապատասխանաբար որոշման հավել-վածում «Հավելված» բառը՝ «Հավելված N 1» բառերով.

3) որոշումն 1-ին կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով՝

«1.1. Հաստատել հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում (Արաբկիր վարչական շրջան) Կառուցապատողի կողմից կառուցվող բազմաբնա-կարան շենքային համալիրի երկրորդ փուլի բնակարանների և ավտոկայանատե-ղիների վաճառքի կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:».

4) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «1000» թվերը փոխարինել «826» թվերով.

5) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում «522» թվերը փոխարինել «348» թվերով.

6) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

7) որոշման 2-րդ կետը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթա-կետով՝

«3) սույն որոշմամբ սահմանված կարգերով վաճառքի ենթակա է թվով 826 բնակարան, յուրաքանչյուր բնակարանի հետ, որպես մեկ գույքային միավոր, մեկ ավտոկայանատեղի:».

8) որոշման 2.1-ին կետի 1-ին ենթակետից հանել ««ա» պարբերությունում նշված 478» բառերը.

9) որոշման 2.1-ին կետի 3-րդ ենթակետում «սույն որոշմամբ հաստատված կարգով» բառերը փոխարինել «սույն որոշմամբ հաստատված կարգերով» բառերով.

10) որոշման 3-րդ կետը «ելքերն իրականացնել» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր փուլի համար առանձին» բառերով.

11) որոշման 4-րդ կետը «ստացված տոկոսները» բառերից հետո լրացնել «(1-ին փուլի դեպքում)» բառերով.

12) որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) սույն որոշմամբ հաստատված կարգերով սահմանված՝

ա. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվող տուգանքի գումարները,

բ. գրավի առարկայի (հետգնման) գծով փոխանցումները».

13) որոշման 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում «սույն որոշմամբ հաստատված կարգով» բառերը փոխարինել «սույն որոշմամբ հաստատված կարգերով» բառերով.

14) որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված կարգի 7-րդ գլխի «Արտաքին հարդարման, հարթ տանիքի կառուցման և բարեկարգման աշխատանքները» մասի 1-ին կետի 2-րդ այնուակով ներկայացված նկարագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Շենքի ճակատային մասի երեսապատում՝ տուֆի, բազալտի սալիկներով, իսկ ոչ ճակատային (բակային) մասերը՝ բարձրակարգ սվաղով՝ ներկված ճակատային ներկով կամ շենքի բոլոր ճակատների և ոչ ճակատային (բակային) մասերի երեսապատում տրավերտինապեմզային սալով՝ ջերմամեկուսիչ շերտով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ